

կախութեան մոլեուանդ ախոյեաններից մէկը։ Նրա տեղը, դժբախ-
տաբար, մնաց բաց եւ յայտնի չէ, թէ ո՞վ եւ երբ կարող է բռնել։

II

ՊՐՈՒՅ. Յ. Թ. ԳԱՅԱԿԱՆ

Յունիս 10ին Ալեքսանդրիայում մեռել է պրոֆ.Յ.Թ.Գայաեանը։ Հանգուցեալը իր կեանքը նւիրել էր մշակութային աշխատանքի՝ զբաղելով մինչեւ մահ նոր սերունդի դաստիարակութեան գործով։ Երիտասարդ տարիքին եղել է նաեւ յեղափոխական, որ, սակայն, երկարատեւ չի եղել։

Պրոֆ. Յ. Գայաեանը ծնվել էր 1864 թ. օգոստ. 28-ին Մարդուանում։ Աւարտելով Մարզուանի կոլեջը՝ նա ուսուցչութեան էր կոչւել նոյն դպրոցում, իրեւ հայերէն լեզվի դաստիու։ Զերմ հայ-
րենասիրութեամբ վառած երիտասարդ էր, այդ պատճառով երբ Փոքր Հայքում երեւաց զնչակեան կուսակցութիւնը, անմիջապէս յարեց նրան։

Զնչակեան կուսակցութիւնը զբաղւած էր այդ ժամանակ ցուցական ձեռնարկներով, որոնց հետեւանքով, 1892 թ. վերջնը, Կեսարիայում, Եոդկաթում, Մարզուանում եւ Փոքր Ասիայի մի քանի ուրիշ վայրերում տեղի ունեցան զանգւածային խուզարկութիւններ ու ձերբակալութիւններ։ Մօտ 500 հայեր, իրեւ քաղաքական յանցաւորներ, հաւաքուեցին Գաղատիայի բանտը։ Դրանց մի մասը, ուրոշ ժամանակից յետոյ ազատ արձակեցին, իսկ 56 հոգուն ամենադըժուխային պայմաններում բանտային արգելքի տակ պահելուց յետոյ, 1893 թ. մայիս եւ յունիս ամիսներին դատի ենթարկեցին։ Տեղի ունեցաւ Գաղատիայի նշանաւոր դատավարութիւնը։

Իրապէս դատ ու դատաստան չէր, այլ՝ դատական զաւեշտ։ Կառավարութիւնը առաջուց տեղել էր վճիռը. դատավարութիւնը արտաքին երեւոյթները փրկելու համար սարքած մի խաղ էր։ Ամբաստաննեալներից 17 հոգի մահւան դատապարտեցին, 6 հոգի՝ 15 տարւայ բերդարգելութեան, 8 հոգի՝ 10 տարւայ եւ 10 հոգի, ուրոնցից մէկը կին, 7 տարւայ եւ այլն։ Մահւան դատապարտւածների մէջ էր եւ պրոֆ. Յովիկ. Գայաեանը։

Գաղատիայի դատավարութեան չուրջ ահազին յուլում առաջ եկաւ հայ եւ օտար հասարակութեան մէջ։ Պրոֆ. Գայաեանի հետ մահւան էր դատապարտած եւ Մարզուանի կոլեջի պրոֆէսոր Կ. Թումայեանը, որի զեցերուհի կինը ոտքի հանեց Եւրոպայի հանրա-

լին կարծիքը ի նպաստ համիտեան զոհերի : Մասնաւորապէս զօրաւոր միջամտութիւն գործեց անդլիական կառավարութիւնը, որի հետեւանքով մահապատիմների մեծ մասը մեղմացւեց : Հինգ հոգի, սակայն, — Թորոս Ծառուկեան, Յովհաննէս Արդումանեան, Կիւլպէնկ Բարսեղեան (Համալեան), Միրիման Թորոսեան (Խանապախեան) եւ Փանոս Եազուպեան — կախաղան հանւեցին 1893 թ. յուլիս 18-ին :

Պրոֆ. Յ. Գայաեան, ինչպէս եւ պրոֆ. Թումայեանը, բանտից ազատ թողնեւց եւ շտապեց հետանալ Թիւրքիայից : Նա մի քանի տարի ուսանողութիւն արաւ կդիմքուրդում, ուր հետեւց մանկավարժութեան եւ լեզուարանութեան : Ապա, յաջորդարար, ուսուցչութեամբ զբաղւեց Գերմանիայում, Զելցերիայում եւ ի վերջոյ հստատեւց Եղիպատոսում : 1910 թ. տնօրին անւանեւց Աղեքսանդրիայի հայկական դպրոցին, 1913 թ. նոյն պաշտօնով փոխադրւեց Գահիրէ 1918 թւից սկսած, վեց տարի շարունակ հայերէն լեզուի դասեր տևեց Ամերիկան Կոլցիում, ասպա հինգ տարի դասախոս եղաւ Ինգլիշ Ակուլում : Մի խօսքով, իր կեանքը ամբողջ անցաւ կրթական-մանկավարժական գործունէութեան մէջ :

Բայց պրոֆ. Յ. Գայաեանը սահմանափակ մասնագէտ չէր . նա միաժամանակ ներբւած էր հանրային գործունէութեան, զբաղւում էր նաեւ զբական աշխատանքով : Պատերազմի ըրջանում նա Եգիպտոսի հայ Աղգային Միութեան հոգին էր եւ, մանաւանդ, մեծ արժանապատութեամբ ներկայացնում էր հայ ժողովուրդը օտարների առջեւ . նրա ջանքերի արդիւնքն էր եւ Որբապաշտպան Միութիւնը, իսկ վերջին տարիները՝ նաեւ հայ ժողովրդական Միութիւնը : Հայաստանի անկախութեան ըրջանում պրոֆ. Գայաեանը Հանրապետութեան ամենանիւրած ջատազովներից մէկն էր եւ ոչ մէ ճիզ չէր ինայում նպաստելու համար հայ պետականութեան ամբապնդման : Երբ 1920 թ. ամառը Եգիպտոս եկաւ Հայաստանի Պատերակ Ա. Խատիսեանը, պրոֆ. Գայաեանը ամենագործօն աշակցողներից մէկը եղաւ : Այսպէս երբ 1921 թ. զարնանը Եգիպտոս հասան Հայաստանի տարագիր պետական գործիչների մի խումբ՝ Յ. Քաջազնունի, Լ. Շանթ եւ ուրիշներ, պրոֆ. Գայաեանը ամենաջերմ ընդունելութիւն ցոյց տւողներից մէկը եղաւ :

Պրոֆ. Գայաեանը ծանօթ էր եւ իբրեւ գրչի մշակ : Նրա տաք եւ հայրենաշունչ յօդւածները հայերէն թերթերում եւ հանդէսներում կաղացւում էին հետաքրքրութեամբ : Կատարում էր եւ բանասիրական պրատուններ, ինչպէս եւ թարգմանութիւններ անդիմերէն եւ գերմաններէն լեզուներից : Մահից մի օր առաջ լրացրել է հայե-

ըէն լեզւաբանական բացդիրքի կազմութիւնը, որ երկար տարիների տքնաջան աշխատանքի պտուղ է եւ որ մի խումբ մտաւրականների նախաձեռնութեամբ հրատարակութեան պիտի տրսի առանձին հատորով:

Եգիպտոսի հայ հասարակութեան մէջ պրոֆ. Յ. Գայականը հեղինակաւոր եւ ընդհանուր համակրանք վայելող անձ էր: Դաւանանքով բողոքական՝ ամբողջ կեանքում նա աշխատեց հայկական ընդհանուր գործերում եւ մահւանից առաջ կտակեց, որ իրեն թաղեն հայկական գերեզմանատանը լուսաւորչական ծէսով: Անցեալ տարի Եգիպտահայ Ուսուցչական Միութեան նախաձեռնութեամբ տօնւեց նրա հանրային - կրթական գործունէութեան 50 ամեակը - յարգանքի մի արտայատութիւն, որին պրոֆ. Գայականը արժանի էր ըստ ամենային:

III

ՅԱԿՈԲ ՔՈՉԱՐԵԱՆ

Մի տարի առաջ, 1933 թ. յունիս 3-ին, Երեւանի «Մորհրդ» Հայաստանի թերթի չորրորդ էջի ամենէն վարի անկիւնը, սեւ շրջանակի մէջ, տրւած էր հետեւեալ մանրատառ, հազիւ նշմարելի մահապղը:

«Հ. Կ. Խաչի կենուկոմի տեղիումը եւ կողեկտիւր խոր ցաւկցուքին են յայտնում նոյն կողեկտիւի անդամ Յակոբ Քոչարեանի անակնկալ մահւան առքի»:

Այսքան և ուրիշ ոչինչ: Այնուհետև այլևս ո՛չ մի խօսք, ո՛չ Հայաստանի, ոչ էլ արտասահմանի թերթերում: Եթէ այդ օրհնեալ «տեղկոմն» ու «կողեկտիւն» էլ ըլինէին, ապարախտ Քոչարեանին ո՛չ մի յիշող չպիտի գտնէր: Մինչդեռ հանգուցեալը այն մարդկանցից էր, որոնք բազմաթիւ ծանօթներ ու բարեկամներ ունեն եւ իբրենք էլ բարեկամ են շատերին: Բացի այդ, Քոչարեանը նաև աչքի ընկնող հասարակական ու մշակութային գործիչ էր:

Արդարութիւնը պահանջում է, որ գոնէ այժմ, մահւան տարելիցի առթիւ, թէկուղ հակիրճ խօսքերով, վերյիշենք նրա կեանքն ու գործը:

Յակոբ Քոչարեանը Երեւան քաղաքից էր, ծնած 1865 թւին: Առաջնակարդ մրցանակով աւարտելով պետական դիմնազիւնը՝ ութունական թւականների վերջերը նա մտաւ Մոսկվայի համալսարանի պատմա-բանասիրական բաժինը, ուր աչքի ընկաւ իր փայլուն